

ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՍՊԻՏԱԿՈՒՄ

Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ աշխատանքային այցով եղավ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում, որտեղ ծանոթացավ իրականացվող բնակարանաշինության աշխատանքներին: Վարչապետին ուղեկցում էին քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը եւ Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը:

Ինչպես նշեց Վ.Վարդանյանը, Սպիտակում ներկայումս ընթացքի մեջ են 220 բնակարանների շինարարական աշխատանքները: Բնակարաններում իրականացվում են ներքին հարդարման, ինժեներական աշխատանքներ: Նախարարի հավաստմամբ՝ աշխատանքները գտնվում են համապատասխան մասնագետների ուշադրության կենտրոնում եւ արձանագրվելիք թերությունները ժամանակին հայտնաբերվում ու վերացվում են: «Մեզ համար կարեւոր է կառուցվող բնակարանների սեյսմակայանության ապահովումը, որը կազմում է 9 բալլ»,- ասաց Վ.Վարդանյանը:

Բնակարանաշինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել հունիսի վերջին: Նախարարի խոսքերով, բնակարանների սալիկները ներկրվելու են այլ երկրներից, ինչի շնորհիվ տնտեսվելու է 300 մլն դրամ, իսկ դրանք կուղղվեն քաղաքի ենթակառուցվածքների զարգացմանը, դպրոցների, մանկապարտեզների կառուցմանը: Նշված 220 բնակարանները շահագործման հանձնելուց հետո Սպիտակում եւս 90 ընտանիք կմնա շահառուների թվում:

Լոռու մարզում նախորդ տարի շահագործման է հանձնվել 170 բնակարան:

<<Հայոց Աշխարհ>>,

04.05.2010թ.